ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման եղանակները՝ «Հայ գրականություն» առարկայի դասերին

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Վարդիշաղ Մովսիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Շուռնուխի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

1. Քննադատական մտածողության և վերլուծության դերը, նպատակը և խնդիրները 5

2. Քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների ձևավորման մեթոդներն ու եղանակները՝ Հայ գրականության դասաժամերին 8

Եզրակացություններ 15

Օգտագործված գրականության ցանկ 16

Ներածություն

Կրթության անընդհատ բարելավվող տիրույթում քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացումը մանկավարժների առաջնահերթ խնդիրներից է: Այս ճանաչողական կարողությունները ոչ միայն հնարավորություն են տալիս սովորողներին ավելի խորը ներգրավվելու կրթական բովանդակության մեջ, այլև զինում են նրանց ժամանակակից աշխարհի դժվարություններին բախվելու պարագայում կողմնորոշվելու համար անհրաժեշտ գործիքներով: Գրականության ուսուցման համատեքստում հատկապես կարևոր է քննադատական մտածողության և վերլուծական կարողությունների զարգացումը: Երբ սովորողները ընկղմվում են հայ գրականության հարուստ աշխարհ, նրանք առնչվում են այնպիսի ստեղծագործությունների, թեմաների, մշակութային ենթատեքստերի, որոնք պահանջում են յուրօրինակ մեկնաբանություն և գնահատում:

Սույն հետազոտության **արդիականությունը** մշակութային ժառանգության և մտավոր զարգացման յուրահատուկ միաձուլման մեջ է, որն առաջարկում է հայ գրականությունը՝ որպես դասավանդման առարկա: Այդ առումով քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների ուսումնասիրությունը ծառայում է ոչ միայն հայ գրական ավանդույթների վերաբերյալ ուսանողների ըմբռնումը հարստացնելուն, այլև ավելի լայն համատեքստում զարգացնելու նրանց ճանաչողական կարողությունները:

Հետազոտության **նպատակն** է հայ գրականության դասաժամերին քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման արդյունավետ ռազմավարություններ բացահայտելը՝ բարձրացնելու տվյալ առարկայի ուսուցման և ուսումնառության որակը:

Հետազոտությունը հիմնական **խնդիրներն** են.

1. «Հայ գրականություն» առարկայի համատեքստում բացահայտել քննադատական մտածողության և վերլուծության ուսուցմանը բնորոշ հատուկ մարտահրավերներն ու հնարավորությունները,
2. հետազոտել մանկավարժական առկա մեթոդները և նորարարական մոտեցումները, որոնք արդյունավետորեն կիրառվել են խնդրո առարկա հմտությունները զարգացնելու գործում,

3. նպաստել գրականության ուսուցման ժամանակ քննադատական մտածողության և վերլուծական կարողությունների բարձրացման արդյունավետ ռազմավարությունների ավելի լայն խոսույթին:

Սույն հետազոտության **օբյեկտը** հայ գրականության դասաժամերին սովորողների քննադատական մտածողություն և վերլուծական հմտություններ հաղորդելու գործընթացն է, իսկ **առարկան** հայ գրականության դասաժամերին քննադատական մտածողություն և վերլուծական հմտությունների ձևավորման արդյունավետ մեթոդները և նորարարական մոտեցումներն են:

Հետազոտության նպատակին հասնելու համար իրականացվել է մանկավարժական մոտեցումների որակական վերլուծություն, ներառյալ դեպքերի ուսումնասիրություններ և հարցազրույցներ՝ փորձառու մանկավարժների հետ:

1. Քննադատական մտածողության և վերլուծության դերը, նպատակը և խնդիրները

Քննադատական մտածողությունը մտածողության այնպիսի տիպ է, որին տիրապետելու համար նախ և առաջ կարևոր է բառ-հասկացությունը ճիշտ վերլուծել և հասկանալ: Քննադատական մտածողությունը համակարգված, հիմնավորված, լավ ուսումնասիրված վերլուծություն և գնահատում է:

Քննադատական մտածողությունը բնածին հատկանիշ չէ և աշակերտները, կարող են դրսևորել բնածին հետաքրքրասիրության և վերլուծական տարբեր մակարդակներ: Այս հմտությունն ու մտածելակերպը զարգանում են ժամանակի ընթացքում՝ դաստիարակվելով ճիշտ կրթությամբ: Թեև բնածին հատկանիշ չէ, յուրաքանչյուր աշակերտ ունի այս անգնահատելի հմտությունը զարգացնելու հնարավորություն: Այս հմտությունը երեխային ուղեկցում է անբողջ կյանքի ճանապարհին, դրա համար մեզանից պահանջվում է կանխամտածված, կշռադատված, անկողմնակալ ջանքեր:

Քննադատական մտածողությունը շատ կարևոր է, քանի որ այն աշակերտներին հնարավորություն է տալիս ճիշտ և արդյունավետ նավարկելու այս բարդ ու տեղեկատվական հարուստ աշխարհում: Այս ձեռքբերումը աշակերտների մեջ ուժեղացնում է խնդիրներ լուծելու կարողությունները, օգնում է տեղեկացված որոշումներ կայացնել, խթանում է խնդիրների ավելի խորը ըմբռնմանը:Դա արժեքավոր հմտություն է կրթության, հետագա կյանքի հաջողության և առօրյա կյանքում, որը հնարավորություն է տալիս երեխաներին ավելի հստակ և քննադատաբար մտածել տարբեր հանգամանքներում:

Կրթության առումով քննադատական մտածողությունը խրախուսում է աշակերտներին դուրս գալ անգիր սովորողի, կրկնողի, լուռ լսողի դերից և ակտիվորեն ներգրավվել որոնողական, հետազոտական աշխատանքներում: Այս տիպի ուսուցումը զարգացնում է սովորելու քաղցր և ինտելեկտուալ հետաքրքրասիրությունը:

Քննադատական մտածողության արդյունավետ կիրառումը իր մեջ ներառում է տեղեկության վերլուծության, որոշումներ կայացնելու և խնդիրներ լուծելու նպատակաուղղված մետեցում: Կրթության այս մեծ գործում իր ուրույն տեղն ունի գրականությունը: Գրականությունը արվեստի տեսակ է, մայրը արվեստների, որը իր գրկում սնել և դաստիարակել է բազում սերունդներ: Այդ վեհ գործի մի մասնիկն էլ մենք՝

ուսուցիչներս ենք և պետք է գիտակցված ուղղորդենք մեր աշակերտներին, քանի որ նրանց ձեռքերում է մեր երկրի ապագան:

Հասարակությունը անբաժան է կրթությունից և կրթությունը բոլոր ժամանակներում ուղղված է եղել հասարակության պահանջների բարելավմանը: Կրթության նպատակը միշտ եղել է անփոփոխ՝ սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար լիարժեք և ակտիվ անհատներ:

Աշակերտ-անհատի իմացական ընկալումը զարգացնելու ամենաարդյունավետ եղանակներից մեկը ինքնուրույն, վերլուծական և քննադատական մտածողության զարգացումն է: Շատ գիտնականներ նշում են, որ կրթությունը կարող է զարգացնել սովորողի քննադատական մտածողությունը :Գրականության ճիշտ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել և բարձրացնել քննադատական մտածողության մակարդակը:Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը պետք է դրվի մինչև դպրոցահասակ լինելը և հստակ քայլերով շարունակվի ուսումնառության յուրաքանչյուր փուլում:

Հայ գրականության հիմնական քայլերն են ակտիվացնել ուսումնական գործընթացը, ակտիվ քննարկումների արդյունքում ձևավորել աշխարհահայացք, որը դուրս է նախապաշարմունքից, դրսևորում է ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթի նկատմամբ; Այս խնդիրն լուծելու նպատակաուղղված գրականության ժամը իր մեջ ամփոփում է մտավոր բարդ գործընթաց, որը սկսվում է հստակ նպատակով և ավարտվում է գերազանց վերջնարդյունքով:

Նպատակն է՝ դաստիարակել քննող, հետաքրքրվող, ճիշտ լուծումներ գտնող, ազնիվ, արդար, հետազոտող, կշռադատող սերունդ: Աշխատանքը արդյունավետ կհամարվի այն ժամանակ, երբ աշակերտը աչքի կընկնի այս հատկանիշներով և ունակ կլինի դատել նաև ինքն իրեն, կգտնի իր քայլերի մեջ թերություններ և խիզախորեն բարձրաձայնելով կուղղի դրանք:

Մշակված քննադատական մտածողությունը աշակերտներին շատ առավելություններ է տալիս: Եթե սովորողի մտածելակերպը զարգացած է, նա կունենա հետևյալ հատկանիշները՝

- աշակերտը կկարողանա վավեր եզրակացություններ անել եւ ստուգել դրանց ճշգրտությունը

- աշակերտը կկարողանագտնել և հավաքել այն տեղեկատվությունը, որը անհրաժեշտ է խնդրի լուծման համար.
- աշակերտը կկարողանա է պատճառաբանել եւ արդարացնել իր դիրքորոշումը.
- աշակերտը կկարողանա հստակ ձեւակերպել հարցեր, խնդիրներ կամ պահանջներ.
- աշակերտը ի վիճակի կլինի օգտագործել եւ մեկնաբանել վերացական գաղափարներ.
- աշակերտը կ կարողանա արդյունավետորեն համագործակցել դասընկերների հետ, նոր լուծումների որոնման մեջ:

Ինչ վերաբերում է քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների ձևավորման հարցում **Հայ գրականության** ուսուցչի դերին և նպատակաուղղված խնդիրներին, ապա պետք է ասել, որ նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել երեխաների մտածողության զարգացմանը: Պետք է ստեղծվի այնպիսի համապատասխան միջավայր, որտեղ սովորողը չի խուսափի սեփական տեսակետն արտահայտելուց, պատրաստ լինի լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ: Այս դեպքում սովորողի խնդիրն է հստակ դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը, կամ ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Պետք է այնպես ուղղորդել, որ գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորի գնահատել իր իսկ գործունեություն:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող աշակերտը առանց քննարկելու, բանավիճելու չի ընդունում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները: Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական մտածողության ճիշտ ձևավորումը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է:

2. Քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների ձևավորման մեթոդներն ու եղանակները՝ Հայ գրականության դասաժամերին

Այսպիսով քննադատաբար մտածողությունն զարգացնելը լինելով գրականության կարևորագույն նպատակ,այս աշխատանքում կփորձեմ ներկայացնել մեթոդների և եղանակների կիրառման առանձնահատկություններ:

Նախ՝ նշենք, որ «critical» բառն առաջացել է հունարեն «krinein» բառից, որը թարգմանաբար նշանակում է դատել ինչ-որ բանի արժեքի մասին: Իսկ քննադատական մտածողությունը սահմանվում է որպես. «տեղեկատվությունը տրամաբանորեն վերլուծելու, հիմնավորված դատողություններ, եզրակացություններ անելու և ստացված արդյունքները տարբեր պայմաններում կիրառելու կարողություն»: Քննադատական մտածողությունը, լինելով մարդու մտածողության հիմնաքարն ու զարգանալով մարդու անձնական կյանքի փորձի հիման վրա, բնորոշվում է ճանաչողական հետաքրքրությամբ ու մարդուն հնարավորություն է տալիս ակտիվորեն աշխատել տեղեկատվության հետ՝ ձևավորելով նոր գիտելիք ստեղծելու, իմաստավորված հարցեր առաջադրելու ու վերլուծելու, համագործակցելու, որոնողական ու հետազոտական աշխատանքներ իրականացնելու, կշռադատելու ու ինքնուրույն եզրահանգումներ անելու, նախագծելու ու սեփական որոշումների հետևանքները կանխատեսելու կարողություններ:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ մեր օրերում առանցքային համարվող քննադատական մտածողությունը նպատակաուղղված, կշռադատված ու տրամաբանված մտածողություն է, իսկ քննադատական մտածողությամբ մարդիկ այսօր պետք են աշխատանքային գործունեության բոլոր ոլորտներում: Մանկավարժական կրթության իրականացման տեսանկյունից շատ կարևոր է, որ դասավանդվող յուրաքանչյուր առարկա նպաստի աշակերտների քննական-վերլուծական մտածողության զարգացմանը, քանի որ մանկավարժի մասնագիտության համար շատ կարևոր է ամեն ինչը քննության ենթարկելը, յուրաքանչյուր երևույթ, փաստ, իրադարձություն վերլուծելը, դրա հավաստիությունը ստուգել կարողանալը, ակտիվ գործելը, նախագծելու և կանխատեսելու կարողությունը, իր աշխատանքի մեջ բազմազանություն մտցնելն ու ստեղծագործ լինելը:

Հայ գրականության դասաժամերին քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում, որը հաճախ ներկայացվում է հապավումով՝ որպես ԽԻԿ համակարգ:

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝
Նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:
Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝
Մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնագնդի, հինգ րոպեանոց ազատ շարադրանք:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝
Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:
Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝
Տ-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում:

Կշռադատման փուլի նպատակներից են՝
Սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի կշռադատման փուլում՝
քառաբաժան, խորանարդում: Նաև շատ հետաքրքիր և արդյունավետ է «Հայ գրականություն» առարկայի վերջնարդյունքներն ապահովող մի շարք փոխներգործուն մեթոդներ, որոնց կիրառման հիմքում ինտեգրված է քննադատաբար մտածելու և սովորելու կարողությունը.

- մտագրոհը, երբ սովորողների ակտիվությունը խթանելու միջոցով բացահայտվում են երեխաների ձեռք բերած գիտելիքները ուսումնասիրվող թեմայից, այնուհետև դրանք համակարգվում և ընդհանրացվում են՝ հեշտացնելով նոր նյութի ընկալումն ու յուրացումը,

- տեքստի նշագրումը, կրկնակի գրառումների օրագիրը, երբ սովորողների գիտելիքները համակարգվում ու իմաստավորվում են՝ սովորողների կողմից ուսուցանվող նյութը առավել խորությամբ ուսումնասիրելու, կարևորը երկրորդականից առանձնացնելու ու հիմնավորելու, հին ու նոր գիտելիքների միջև գիտակցված կապեր ստեղծելու շնորհիվ,
- Վենի դիագրամը, պրիզման, երբ աշակերտները պետք է կարողանան ստացած նոր գիտելիքի արդյունքները կշռադատել, համեմատել, վերլուծել, համադրումներ ու ընդհանրացումներ կատարել և բացահայտել երևույթի առանձնահատկությունները՝ նմանություններն ու տարբերությունները,
- կենսագրական մեթոդը,այս մեթոդը հաճախ է կրկնվում գրականության ժանրերին, գրողի կյանքի ու կենսագրության ուսումնասիրություն, օբյեկտիվ վերլուծություն ու ընդհանրացում, կարևոր անձնային որակների, արժեքների իմաստավորում, ընդօրինակման արժանի գործունեականության բացահայտում և կշռադատում,
- մոդելավորումը, երբ աշակերտները վերլուծություն, համադրում ու վերացարկում են իրականացնում, մեկնաբանում ու իմաստավորում են ուսումնասիրվող հիմնախնդիրը, այնուհետև կանխատեսում, մշակում կամ կառուցում են ուսումնասիրվող իրադրության, երևույթի մոդելը,
- բանավեճը, որի ժամանակ սովորում են լսել, կշռադատել, համեմատել և քննադատաբար մոտենալ յուրաքանչյուր կարծիքի: Բանավեճը սովորեցնում է երկխոսություն ծավալել, լսել բոլորի կարծիքները, կշռադատել դրանցից յուրաքանչյուրը՝ որոշելու համար որ մեկին միանալ՝ հիմնավորելով սեփական ընտրությունը: Այն յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է տալիս միասին մտածել և մասնակցել բանավեճի թեմայի վերաբերյալ միասնական կարծիքի ձևավորմանը և ազդում է ուսանողների օբյեկտիվ ինքնագնահատականի ձևավորման վրա:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Հայ գրականությունն հարուստ է և բազմազան, ունի մեծ պաշարներ որոնց օգնությամբ ուսուցիչը կարող է բռնել աշակերտի ձեռքը և սահուն տանել դեպի բարձր դատողության և քննադատողության: Միայն կարևոր է ճիշտ ուղղորդել և աշակերտին պասիվ մասնակցողի դերից փոխել ակտիվ փնտրեղի, ըմբռնողի:

Քննադատական մտածողության և վերլուծության արդյունավետ ուսուցման ժամանակ կարելի է ներկայացնել 7-րդ դասարան Ավելորդը պատմվածքի միջոցով:Կարելի է աշակերտներին տալ նախնական տեղկություն այդ ստեղծագործության մասին, ընդհանուր բնութագրել:

Եթե դասաժամը պլանավորում ենք այնպես, որ աշակերտները պետք է քննադատողական վերլուծություն կատարեն, ապա թողնում ենք նրանց ստեղծագործությունը ինքնուրույն հասկանան, գտնեն տեղեկություններ այդ ժամանակաշրջանի, քաղաքական և նաև ընտանեկան ավանդական սովորույթների մասին: Աշակերտները ուսումնասիրելուց հետո ներկայացնում են՝

-Հուզիչ պատմվածք՝ մարդկային ագահության, սառնասրտության և մարդու բարոյական անկման մասին: Դեպքը տեղի է ունենում պատերազմական աղետի ժամանակ, երբ գլխավոր հերոսի ականջին հասնում է, թե թուրքերը մտնում են իրենց: Աշակերտները առանձնացնում եմ Հաճի աղայի մասին տեղեկությունները, նրա բնավորության գծերը և այլն... Քննարկում են նրա պահվածքը: Հաճի աղայի կնոջ մասին են տեղեկություններ առանձնացնում, քննարկում նրա խոնհարությունը… Հետու նրա տղաներին…, Եվ իմ մանկավարժական գործունեության ընթացքում միշտ լուռ ու ուշադիր հետևել եմ թե ինչպես են երեխաները աշխատում Սրբունի կերպարի վրա նրան համեմատուն՝ եղբոր հետ: «Դավաճանեց իր ամենահարազատին, թողեց գայլի երախի բաժին ու հեռացավ, հասկանալով թե ինչ պետք է լինի քրոջ վերջը:Իսկ քույրը մինչև վերջին վայրկյանը նվիրված էր իր եղբորը: Նույնիսկ վերջին պահին Հաճի աղային տվեց իր կողմից գործած տաք ձեռնոցները, որպեսզի եղբայրը չմրսի, ասելով՝ «Ես անդամալույծ եմ, այսօր կամ, վաղը չկամ…»:

Գրեթե միշտ երեխաները հայտնում են նույն կարծիքը «1915 թվականից մինչ մեր օրերս էլ շատ մարդիկ մտածում են և պահում են իրենց ճիշտ այնպես, ինչպես այս պատմվացքի գլխավոր հերոսը՝ Հաճի աղան*:* Ամենավերջին շահամոլի պես պատրաստ են անցնել մարդկային կյանքերի վրայով, միայն թե հասնեն իրենց նյութական նպատակին: Բայց նարնք չեն հասկանում, որ վաղ թե ուշ պատասխան են տալու յուրաքանչյուր արած

քայլի համար, ինչպես և Հաճի աղան այս պատմվածքում: Հաճի աղան, պատմվածքի վերջում ապրում է անակնկալ կերպարանափոխություն: Սկզբից հետ վերդարցած գյուղացիներից փորձում է ճշտել Սրբունի որպիսությունը և նրան ի պատասխան ասում են, որ Սրբունը այլևս չկա, անհետ կորել է: Որից հետո, Հաճու մեջ խոում է խղճի ձայնը, արդնանում է մարդ տեսակը և այն գիտակցությունը, որ Աստծու առաջ բոլորը հավասար են և ավելորդ մարդ չի կարող լինել՝ Հաճի աղային դուրս է բերում հավասարակշռությունից ու մատնում հոգեկան տանջանքների...»:

Տվյալ օրինակի միջոցով ուսուցիչը կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ տեղեկության և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Խնդիրների լուծման եղանակները և մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ խնդիրների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավոմանը: Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ տվյալ պատմվածքում կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝

-Ինչու՞

-Ի՞նչ հետևանքների է հանգեցնում

-Ինչպե՞ս եք գնահատում….:

Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա:Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը:

Դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել քննադատողական մտածողությունը և հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

Քննադատողական մտածողությունը կարելի է ներկայացնել հայտնի Բլյումի տաքսոնոմիայով: **Բլյումի տաքսոնոմիան** դասակարգում է կրթական նպատակները կամ ավելի շուտ կրթական վերջնարդյունքները: Այն առաջարկվել է համանուն հեղինակի կողմից 1956 թ., նպատակ ունենալով բարելավելու առարկայական ծրագրերի և դրանց գնահատման շուրջ դասավանդողների միջև փոխըմբռնումն ու հաղորդակցությունը:

Կրթական վերջնարդյունքների նկարագրության չափագրելիությունն ապահովող Բլյումի տաքսոնոմիան ունի հետևյալ կառուցվածքը, որտեղ դասախոսների կամ ուսումնական գործընթացի այլ պատասխանատուների համար պարզ ներկայացված է, թե ինչպես կարելի է խուսափել օգտագործելուց այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, *ընկալելը, գնահատելը*, այլ դրանց փոխարեն հստակ սահմանել այդ վերացարկված սահմանումների առարկայական տարբերակները, որոնց չափագրումը խնդիրներ չի առաջացնում՝

Բլումի տաքսոնոմիական կառուցվածքը	Նկարագրող բառեր
Գնահատում *Գիտելիքի մասին դատողություններ անել*	Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություն անել, լուծել, ռեյտինգավորել, արժևորել, գնահատական տալ
Համադրում *Ստեղծել նոր գաղափարներ կամ առարկաներ*	Առաջադրել թեզ, կանխատեսել, ստեղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել, համադրել
Վերլուծություն *Տեղեկությունը մասերի բաժանել*	Ուսումնասիրել, միավորել, տարանջատել, դասակարգել, հայտնաբերել, զննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել
Կիրառություն *Տեղեկությունը գործածել, գործադրել, կիրառել*	Փորձել, դիագրամ կառուցել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերածել, զեկուցել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարրերը իրար հետ համադրել, հարմարեցնել
Ընկալում *Տեղեկությունը հասկանալ*	Համեմատել, փորձարկել, տարրական զուգահեռներ տանել, ցուցադրել, բացատրել, վերաձևակերպել, քննարկել
Գիտելիք *Տեղեկությունը գտնել կամ հիշել*	Պատմել, ցուցադրել, թվարկել, տեղադրել, կրկնել, սահմանել, բացատրել, քննել, մտաբերել, անվանել, ցույց տալ

Աղյուսակ 1-ին: Բլյումի տաքսոնոմիան և կրթական վերջնարդյունքները

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունների հիմնական մասը ձեռք է բերվում Բլումի տաքսոնոմիայի վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակներում:

Եզրակացություններ

1. Հայ գրականության դասընթացներին քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման եղանակների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կարևոր է՝

- դասավանդվող ցանկացած առարկայի ծրագիր լինի ամբողջական, նպատակն ու խնդիրները, առաջադրանքները, կիրառվող տեխնոլոգիաներն ու մեթոդները համապատասխանեն առարկայի վերջնարդյունքներին,
- կիրառվող բոլոր փոխներգործուն մեթոդներն ու գործնական աշխատանքները նպաստեն հմտությունների ձևավորմանը՝ միտված լինեն քննադատաբար մտածելու և սովորելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

2. Քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները՝

- կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք,
- կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի,
- կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի,
- աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ,
- կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում,
- կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն,
- կարողանալ դասապրոցեսի ընթացքում ձևավորվող քննադատական մտածողությունը կիրառել նաև դպրոցի պատերից դուրս և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով, ուղեցույց, 1-7 պրակ, 1988:
2. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես, 15-6, 2004:
3. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես, 5-6, 2006: